ԱՐԵԳ ԼՈՒՍԻՆՅԱՆ, ԿԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

5–6 ՏԱՐԵԿԱՆ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՊԻԵՍՆԵՐ, ԵՐԳԵՐ, ՊԱՐԵՐ, ԽԱՂԵՐ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 373:78
ԳՄԴ 74.1+85.31
L 968

*Երաշխավորված է ՀՀ ԿԳՆ
Կրթության ազգային ինստիտուտի կողմից*

**ԼՈՒՍԻՆՅԱՆ ԱՐԵԳ, ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ**

L 968 ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ: ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ: Պիեսներ, երգեր, պարեր, խաղեր 5 6 տարեկան երեխաների համար./ Ա. ԼՈՒՍԻՆՅԱՆ, Կ. ՂԱԶԱՐՅԱՆ.– Եր.: «Զանգակ» հրատ., 2009.– 220 էջ, նոտա, տեքստ:

Ձեռնարկում զետեղված ստեղծագործությունները նպատակամիտված են 5-6 տարեկան երեխաների երաժշտական դաստիարակության խնդիրներին և ընդգրկում են գործունեության բոլոր տեսակները՝ երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, պարեր և խաղեր:

Ձեռնարկը հասցեագրված է նախադպրոցական հաստատությունների ավագ խմբերի, ինչպես նաև դպրոցի նախապատրաստմանն ուղղված կարճաժամկետ փորձնական ծրագրով ընդգրկված խմբերում աշխատող դաստիարակներին և տարրական դասարաններում «Երաժշտություն» առարկան դասավանդող մասնագետներին:

ՀՏԴ 373:78
ԳՄԴ 74.1+85.31

ISMN 979–0–9013401–3–8
ISBN 978–0–99941–1–625–6

© Լուսինյան Ա., Ղազարյան Կ., 2009
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2009

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Երաժշտությունը մանկապարտեզում» ուսումնական ձեռնարկում, ամփոփված է 5–6 տարեկան երեխաների կրթական համալիր ծրագրի «Երաժշտական դաստիարակություն» թեմայով նախատեսված նյութերի ընտրանին:

Ձեռնարկը կազմված է այնպես, որ երաժշտական նյութը բաշխվի ըստ եռամսյակների և գործունեության տեսակների՝ երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում՝ պար և խաղ: Ձեռնարկում տրված են մեթոդական ցուցումներ յուրաքանչյուր գործունեության տեսակի վերաբերյալ. հավատացած ենք, որ դրանք էապես կօգնեն մասնագետներին ճիշտ կողմնորոշվելու աշխատանքները կազմակերպելիս:

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

## ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ընտելացնել երեխաներին՝ ուշադիր լսելու ստեղծագործությունները և պատմել իրենց տպավորությունները:
- Արթնացնել հետաքրքրություն վոկալ և գործիքային երաժշտության հանդեպ:
- Հետաքրքրություն առաջացնել ժողովրդական, դասական և ժամանակակից երաժշտության հանդեպ, որոնք կատարվում են մենակատարի, երգչախմբի և նվագարանային տարբեր խմբերի միջոցով:
- Ընտելացնել մտապահել ստեղծագործությունը նախանվագից և ավարտից, մեղեդուց և առանձին ֆրազներից, մասերից:
- Զարգացնել երաժշտության բնույթը և արտահայտչամիջոցները տարբերելու կարողությունը՝ արտահայտել սեփական կարծիքը, տարբերել նաև երաժշտական երկի երկմաս ձևը:
- Տարբերել երգային, պարային և քայլերգային ժանրերը:
- Զարգացնել երաժշտական ստեղծագործությունները համեմատելու, նմանությունը և տարբերությունը գտնելու կարողությունը:
- Ցանկություն առաջացնել պարբերաբար ունկնդրել սիրված ստեղծագործությունները:
- Ծանոթացնել հայկական ժողովրդական երաժշտության լավագույն մանկական ստեղծագործություններին:
- Ըստ հնչերանգի՝ ճանաչել և տարբերել դասական և ժողովրդական նվագարանները:

## ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Զարգացնել ունկնդրած երգերի բովանդակության և բնույթի մասին ինքնուրույն, սեփական բառերով արտահայտվելու կարողությունը:
- Ընտելացնել երեխաներին երգերի՝ թեթև ձայնով, սահուն արտահայտիչ, առանց լարվածության կատարմանը:
- Սովորեցնել շունչ վերցնել երաժշտական ֆրազների միջև:
- Շարունակել սովորեցնել արտահայտիչ արտասանել բառերը:
- Սովորեցնել միասին սկսել և ավարտել երգը, արտահայտիչ կատարել մեղեդին, երգել մեծահասակների հետ՝ առանց նվագակցության և ինքնուրույն՝ նվագակցությամբ:
- Խթանել նախկինում սովորած երգերի վերհիշումը և կատարումը, լսողությամբ տարբերել մաքուր հնչերանգով և սխալ երգեցողությունը, երգելիս պահպանել ճիշտ կեցվածք՝ նստել ուղիղ, ազատ պահել գլուխն ու իրանը:
- Շարունակել զարգացնել երաժշտազգայական ընկալումները՝ հնչյունի բարձրությունը, ռիթմական պատկերները, ուժգնությունը, տեմբրային լսողությունը:
- Խթանել սովորած երգերի բնույթին և բովանդակությանը համապատասխան շարժումների կատարումը:

## ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐԵՐ, ԽԱՂԵՐ

Երաժշտառիթմական շարժումները յուրացվում են ինչպես երաժշտական դաստիարակության ընդհանուր, այնպես էլ հատուկ կրթական խնդիրների իրականացման ընթացքում: Դրանք են՝

- Երաժշտության ընկալում, երաժշտառիթմական զգացողության զարգացում և դրա հետ կապված շարժումների ռիթմայնություն:
- Երեխաների շարժումների համաձայնեցում երաժշտական ստեղծագործության բնույթին և առավել վառ արտահայտչամիջոցներին, տարածական և ժամանակային կողմնորոշիչների զարգացում:
- Երեխաների երաժշտառիթմական կարողությունների և հմտությունների ձևավորում խաղերի, պարերի և վարժությունների միջոցով:
- Գեղարվեստի զգացողության և ստեղծագործական ընդունակությունների զարգացում:

Երաժշտառիթմական շարժման ծրագրային հիմնական պահանջներն են՝ երաժշտառիթմական վարժությունների և խաղերի միջոցով արթնացնել երեխաների հետաքրքրությունը երաժշտության հանդեպ, զարգացնել նրանց երաժշտական ընդունակությունները, օգնել նրանց ընկալելու երաժշտությունն ամբողջապես և զգացմունքային կերպով: Դրանք բավարարելու համար երեխաները պետք է յուրացնեն հետևյալ կարողությունները՝

1. Շարժումները սկսել և ավարտել երաժշտության հետ միասին:
2. Շարժումները համաձայնեցնել երաժշտության բնույթին (աշխույժ, հանգիստ), ռեգիստրի փոփոխությանը (վերևի, ներքևի), տեմպին (արագ, դանդաղ), ուժգնությանը (ուժեղ, մեղմ), երաժշտական ստեղծագործության ձևին (մեկմասանի, երկմասանի):
3. Կատարել հիմնական շարժումները (քայլ, վազք, ցատկ):
4. Կատարել մարմնամարզական վարժություններ (դրոշակով, թաշկինակով, չխչխկաններով) և շարափոխում:
5. Կատարել կերպարային և պարային շարժումներ:

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

# ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Խոսք՝ *Միքայել Նալբանդյանի*

Երաժշտ.՝ *Բարսեղ Կանաչյանի*
Նվագակցությունը՝ *Արեգ Լուսինյանի*






Մեր հայրենիք՝ ազատ անկախ,
Որ պիտ ապրի դարեդար,
Յուր որդիքը արդ կանչում է,
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա, եղբա՛յր, քեզ մի դրոշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:

Նայի՛ր նրան՝ երեք գույնով
Նվիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնե,
Բայց երանի՜, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

# ՄԱՆԿԱԿԱՆ ՆՎԱԳՆԵՐ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ

Կոմիտաս

### I

**Allegretto amabile**




### II






## VII

**Allgrezza, energico**



## IX

**Con alterezza**




## X

**Calmo**



# ԿԼՈՐ ՊԱՐ

Երաժշտ.՝ *Գ. Չթչյանի*




# ԹՋՈՒԿ

*Կա մի թզուկ, ծեր թզուկ,*
*Կարծես լինի քայլող սունկ:*
*Քիթը փոքրիկ՝ գարու չափ,*
*Դեմքը՝ կլոր մի կոճակ,*
*Երբ էլ կանչես, հյուր կգա,*
*Ինչ էլ ուզես, նա կտա:*

Երաժշտ.՝ ***Ա. Լուսինյանի***




sf
f
cresc.
mp
mf (p)
marcato
Coda
D. c. al e poi la coda
p
pp

# ԱՇՆԱՆ ԵՐԳ

Խոսք՝ *Ս. Սկրտչյանի*　　　　Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




Հեռո՜ւ–հեռու սարի վրա
Թել-քել անձրև է մաղում,
Իսկ դաշտերում արև է վառ,
Ոսկե խաղող ենք քաղում:

Անձրև՛, անձրև՛, հեռու գնա,
Թող դեռ լինեն օրեր տաք,
Քաղենք արագ, որ չմնա
Առատ բերքը ձյունի տակ:

# ՏԻԿՆԻԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Երաժշտ.՝ *Պ. Չայկովսկու*



# ՈՒՐԱԽ

Երաժշտ.՝ *Լ. Բեթհովենի*



# ՏԽՈՒՐ

Երաժշտ.՝ *Լ. Բեթհովենի*

**Trauring** /Տխուր/




***Da capo al Fine***

# ԱՇՆԱՆ ԵՐԳ

Խոսք՝ *Հովհ. Թումանյանի* | Երաժշտ.՝ *Ռ. Մելիքյանի*




Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեգի հետ
Փչում է քամին,

Քշում է, տանում
Տերևը դեղին:
Տխուր հանդերից
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

# ԼՈՒՍԻՆԵԻ ՕՐՈՐԸ

«ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ» շարքից

*Օրորում է հովը ծառին,*
*Օրորվում է քամին սարին,*

*Եվ Լուսինն էլ խորհրդավոր*
*Աստղերին է ասում օրոր:*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*

**Andante kantabile**






# ԵՐԵՔ ԱՐՋՈՒԿՆԵՐ

«ԿՐԿԵՍ» շարքից

*Արջերն ահա ծուռ թաթերով,*
*Իրենց փափլիկ քոթոթներով,*

*Արջապար են ահա պարում,*
*Ծուռ թաթերը թափահարում:*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




mp
f
f

# ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԸ

«ԳԱՅԱՆԵ» բալետից

Երաժշտ.՝ ***Ա. Խաչատրյանի***



ԵԳՐԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

# ՓԱՅՏԵ ՁԻՈՒԿ

*Կոմիտաս*
Դաշնամուրային նվագ.՝ *Ա. Լուսինյանի*




Տրո՜փ, տրո՜փ, տրո՜փ,
Վազե՛, ձիո՛ւկ, հո՛պ.
Քարեն վեր, դարեն վեր,
Սիրո՛ւն ձիուկ, դեպի լեռ.
Տրո՜փ, տրո՜փ, տրո՜փ,
Հո՛պ, հո՛պ, հո՛պ:

# ՈՒՐԱԽ ԱՌԱՎՈՏ

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*






Արևն ելավ, ու նորից
Ժպտաց մեր աշխարհը
Ու տվեց ծաղիկներին
Իր գարնան ծիծաղը:

Կրկներգ - Նա վառեց լույսերը մեր
Մեկ առ մեկ, մեկ առ մեկ,
Ու դարձավ գիշերը
Ծաղկավառ ցերեկ:

Եվ հնչեց մեր երգն ուրախ,
Եվ քնքաց շուրջպարը,
Մի պայծառ մանուկ դարձավ
Մեր այս աշխարհը:

Կրկներգ - Նա վառեց լույսերը մեր
Մեկ առ մեկ, մեկ առ մեկ,
Ու դարձավ գիշերը
Ծաղկավառ ցերեկ:

# ՈՐ ՄԵԾԱՆԱՄ

Խոսք՝ *Ս. Կապուտիկյանի*

Երաժշտ.՝ *Ս. Սարուխանյանի*






Ես ամեն օր շուտ եմ զարթնում,
Մարզանք անում ու լվացվում:

*Կրկներգ -*
Մայրս ինչ տա, ուտում եմ ես,
Ձկան յուղն էլ խմում եմ, տե՛ս:

Խմում եմ, որ շուտ մեծանամ,
Շուտ մեծանամ, դպրոց գնամ:

*Կրկներգ -*
Մայրս ինչ տա, ուտում եմ ես,
Ձկան յուղն էլ խմում եմ, տե՛ս:

# ԹՐԱՇՈՒՇԱՆ

«ԱՐԵՎԱԶՕԾ ԾԱՂԿԱՆՈՑ» երգաշարից

Խոսք՝ *Ս. Մուրադյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*






Թրաշուշանն եմ ես ճերմակ,
Ունեմ հպարտ սեգ հասակ,
Թերթիկներս ձյունաթույր,
Թրի նման երկար, սուր:

Թրաշուշանն եմ ես ճերմակ,
Ունեմ հպարտ սեգ հասակ,
Վարդի գույն էլ ունեմ ես,
Սիրուն եմ ես, ժպտերես:

# ԱՌՎԱԿ

Խոսք՝ *Ա. Մարաշյանի* | Երաժշտ.՝ *Է. Միհրանյանի*




Թռչունների կտուցին վառ շողն է քառել,
Բզեզն անգամ ծարավից թևն է կախել:
Կուչ են եկել բոլորը, լուռ նայում են ինձ,
Ջուր են դարձել կարծես քո կարոտից:
Լա՛, լա՛, լա՛...

# ԿԱՐԾՈՒՄ ԵՔ ԹԵ ԿԱՏԱ՞Կ Է

Խոսք՝ *Ս. Կապուտիկյանի* Երաժշտ.՝ *Ս. Սարուխանյանի*




1. Այսօր ուրիշ է կարգը,
Ե՛ս եմ մաքրել հատակը,
Տեղներումդ քարացե՛ք,
Նորից շարժվել չփորձե՛ք:

2. Ջուր չխմեք՝ կկաթի,
Հաց-մաց չուտեք՝ կթափվի,
Լուսամուտը չբացե՛ք,
Փոշի կգա, իմացե՛ք:

3. Ոչ ոք ուժեղ չշնչի,
Թե չէ փայլը կկորչի,
Ի՞նչ է, մաքրել հատակը
Կարծում եք՝ կատա՞կ է:

1.2.3. Կրկներգ - Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, ի՞նչ արիք,
Սենյակն ինչո՞ւ ոտք դրիք:

# ԵՐԵՎԱՆԻ ԱՇՈՒՆԸ

Խոսք՝ *Ա. Մովսիսյանի* Երաժշտ.՝ *Ա. Մովսիսյանի*



Նորից եկել է աշուն.
Երևանի վառ աշուն,
Քո արևի շողերով
Ողջունում ես մեզ, աշո՛ւն:

*Կրկներգ -*

Ի՞նչ սիրուն ես դու, աշո՛ւն,
Ի՞նչ պայծառ ես դու, աշո՛ւն,
Երևանը, սիրելի՛ աշուն,
Զարդարել ես վառ ու նախշուն:

Հազար գույնով ես եկել,
Անուշ բույրով ես եկել,
Վառ կանաչը ծառերի
Ոսկեգույն ես դու ներկել:

*Կրկներգ -*

Աշնանային մրգերով
Լի սեղաններ ես բերել,
Հեքիաթային գույներով
Երևանը ողողել:

*Կրկներգ -*

# ԱՆՈՒՇ ԽԱՂՈՂ

Խոսք՝ *Ա. Մովսիսյանի* Երաժշտ.՝ *Ա. Մովսիսյանի*




Հայաստանի անո՛ւշ խաղող,
Ես երգում եմ քեզ,
Քո հյութալի ողկույզներով
Դու ժպտում ես մեզ:

*Կրկներգ -*

Ա՛յ խաղող, անո՛ւշ խաղող,
Փայլում ես այնպես...
Որքան ասեմ, որքան գովեմ,
Քիչ է, քիչ է քեզ:

Հատիկներդ արևի տակ
Ասես թաքնվել,
Առավոտյան ցողերի տակ
Թավիշ են հագել:

*Կրկներգ -*

Արարատյան մայր հողից ես
Դու ծնունդ առել,
Արեգակի վառ շողերից
Դու սնունդ ես առել:

*Կրկներգ -*

# ԾԱՂԻԿ ՋԱՆ

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*




Բակում՝ բարդու կանաչ ծառ,
Ծաղի՛կ, ծաղի՛կ, ծաղի՛կ ջան:
Ծառի տակին՝ կանգնած զառ,
Գարո՛ւն, գարո՛ւն, գարո՛ւն ջան:

Հավքի կտցին՝ լույսի շող,
Դաշտի սիրում ծաղի՛կ ջան:
Գառան դնչին՝ շաղի ցող,
Գարո՛ւն, գարո՛ւն, գարո՛ւն ջան:

# ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Խոսք՝ *Ս. Կապուտիկյանի* Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*






Հայրենի հող ես դու,
Քեզ հազար բարև,
Լե՜-լե՜, լե՜-լե՜, քեզ հազար բարև,
Լե՜-լե՜-լե՜, լե՜-լե՜-լե՜, քեզ հազար բարև:

Արևի շող ես դու,
Շողա՛ մեր վերև,
Լե՜-լե՜, լե՜-լե՜, շողա՛ մեր վերև,
Լե՜-լե՜-լե՜, լե՜-լե՜-լե՜, շողա՛ մեր վերև:

# ԱՆՁՐԵՎ - ԱՆՁՐԵՎ

*Հայկական ժողովրդական երգ*






Ա՛նձրև-ա՛նձրև, վա՛ր արի,
Մեր դաշտերում պա՛ր արի, պա՛ր արի,
Ա՛նձրև-ա՛նձրև, պա՛ր արա,
Ցորեն հացը դու շա՛տ արա, շա՛տ արա:

Օրը մթնել, ամպել ա,
Երկինք-երկիր թխպել ա, մթնել ա,
Արտերի ցորեն հացը
Խշխշալով երգ է ասում, հասել ա:

# Ա՛Յ ԾԻՏԻԿ

*Հայկական ժողովրդական երգ*






Պստիկ, մստիկ ա՛յ ծիտիկ,
Քանի՞ թռչես ծառից ծառ,
Գոնե մի տեղ քիչ տիտիկ,
Հոգնած թևիդ հանգի՛ստ առ:
Ճի՛կ, ճի՛կ, ճի՛կ, ճի՛կ, ծի՜վ, ծի՜վ, ծի՜վ...
Ես հոգնելու սովոր չեմ,
Կուզեմ լինել մեծ արծիվ,
Որ ավելի լավ թռչեմ,
Որ ավելի լավ թռչեմ, լավ թռչեմ:

# ՀԱՆԻԿ, ՆԱ՛Յ

*Հայկական ժողովրդական երգ*






Մեր բակի դուռը բաց ա,
Հանիկ, նա՜յ, նանիկ, նա՜յ,
Ոտքերս շաղով թաց ա,
Հանիկ, նա՜յ, նանիկ, նա՜յ:

Երկինքը ամպամած ա,
Հանիկ, նա՜յ, նանիկ, նա՜յ,
Անձրևից բակը թաց ա,
Հանիկ, նա՜յ, նանիկ, նա՜յ:

# ԽՈՐՈՏ Է

Խոսք՝ *Վիկ. Վարդանյանի*

Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*






Խանդուքը խորոտ է, խորոտ է ու կլոտ է,
Շատ է սիրում աշխատանք,
Աշխատանքին միշտ փառք տանք:

Խանդուքը պստիկ է, պստիկ է, բայց ճստիկ է,
Ծտերին կեր է տալիս,
Նոր է տնից դուրս գալիս:

# ԱՐԵ՛Վ - ԱՐԵ՛Վ

*Հայկական ժողովրդական երգ*




Ա՛րև-ա՛րև, եկ, եկ,
Ձիզի քարին վե՛ր եկ,
Սև-սև ամպե՛ր, հեռացե՛ք,
Արևին ճամփա՛ բացեք:

Թողե՛ք նա գա մեզ մոտ,
Նրա լույսին ենք կարոտ,
Կարմի՛ր արև, եկ, եկ,
Ձիզի քարին վե՛ր եկ:

Արևն հաղթեց ամպերին,
Շողը գցեց սարերին,
Ձիզի քարը տե՞ս, տե՞ս,
Պսպղում է ոսկու պես:

ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ՊԱՐԵՐ, ԽԱՂԵՐ

# ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտ.՝ *Ռ. Շումանի*



# ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտ.՝ *Ս. Պրոկոֆևի*





# ԽՈՒՄԱՐ

Կատակ

*Կոմիտաս*




Անուշ քընե երես բաց,
Սահակն եկավ՝ խելք գնաց:

Հաջոնց կալը բոլորպար,
Խումար մեջը կըխաղար:

Ծամեր քալուկ յուր ետև,
Կըքըռվըռեր շատ թեթև:

*Կատարել շարժումներ*

# ՀԱՅԿԱԿԱՆ ՇՈՒՐՋՊԱՐ




## ՀԱՅԿԱԿԱՆ ՇՈՒՐՋՊԱՐ

Երեխաները կանգնում են շրջանաձև՝ դեմքով դեպի կենտրոն: Նրանք նախօրոք բաժանվում են զույգերի, նշանակվում է նաև մենակատարը:

**1–ին տակտ:** Երեխաները կատարում են մեկ ծափ կրծքավանդակի դիմաց:

**2–րդ տակտ:** Միացնում են ափերը աջ և ձախ կանգնած երեխաների ափերին:

**3–րդ տակտ:** Կատարում են չորս ծափ՝ ափերն իրար սահեցնելով (1 տակտին երկու ծափ):

**5–8–րդ տակտ:** Կրկնում են 1–4 տակտերի շարժումները:

**9–12–րդ տակտ:** Նորից միացնում են ափերը (ինչպես երկրորդ տակտում) և պարելով գնում դեպի աջ (իրանը մի փոքր շրջելով նույն կողմը):

**13–16–րդ տակտ:** Շարժվում են դեպի ձախ և կատարում 5–12 տակտերի շարժումները հակառակ ուղղությամբ:

Երաժշտությունը կրկնվում է:

**1–ին տակտ:** Երեխաները կատարում են մեկ ծափ կրծքավանդակի դիմաց:
**2–րդ տակտ:** Միացնում են ափերը աջ և ձախ կանգնած երեխաների ափերին:
**3–4–րդ տակտ:** Ծնկները մի փոքր ծալում են և անմիջապես ուղղում, առանց ափերն անջատելու:
**5-8–րդ տակտ:** Կրկնում են 1–4–րդ տակտերի շարժումները:
**9–12–րդ տակտ:** Անջատում են ափերը, ապա զույգ կազմողները միացնում են աջ ափերը և պտտվում իրենց շուրջը:
**13–16–րդ տակտ:** Զույգերն այս անգամ միացնում են ձախ ափերը և պտտվում հակառակ ուղղությամբ:
Երաժշտությունը նորից կրկնվում է:
**1–4–րդ տակտ:** Մենակատարն անջատվում է երեխաներից և պարում շրջանի ներսում, իսկ մյուսները ծափ են տալիս:
**5–8–րդ տակտ:** Մենակատարը շարունակում է պարել. մյուս երեխաները ձախ ձեռքը պարզելով դեպի կենտրոն և աջը մոտեցնելով կրծքին՝ պարելով գնում են շրջանի ուղղությամբ:
**9–16–րդ տակտ:** Մենակատարը շարունակում է իր պարը, իսկ խումբը, փոխելով ձեռքերի դիրքը, պարում է հակառակ ուղղությամբ:

## ԷԿՈՍԵԶ

Երաժշտ.՝ *Ի. Գումմելի*



# ՇԱԼԱԽՈ

Երաժշտ.՝ *ժողովրդական*

Փոխադրումը դաշն. համար՝ *Է. Բաղդասարյանի*






Առաջին ձև

**1–8 տակտերին** տղաների ձեռքերին թաշկինակներ են, պարելով ներս են մտնում դահլիճ և կազմում շրջան:

**9–12 տակտերին** մեկ ծափ են տալիս, ձեռքերը տարածում կողմ, ափերով դուրս:
Երաժշտության կրկնողության ժամանակ կատարվում են 9–12 տակտերի շարժումները:

**13–16 տակտերին** տղաները կքանստում և ուղղվում են: Այնուհետև աջ ոտքի կրունկով երկու անգամ հարվածում են հատակին:
Երաժշտության կրկնողության ժամանակ կատարում են 13–16 տակտերի շարժումները:

Երկրորդ ձև

**1–8 տակտերին** տղաները, ձեռքերը պահած ներքևում, թափահարելով փոքրացնում են շրջանը, մեկ ծափ են տալիս և ձեռքերը դնում ընկերների ուսերին:

**9–12 տակտերին** կքանստում և ուղղվում են, ոտքի կրունկով երկու անգամ հարվածում են հատակին:

**13–16 տակտերին** մեծացնում են շրջանը, կատարում երկու ծափ, պտտվում , նստում են աջ ոտքի ծնկին և ծափ են տալիս:

Երրորդ ձև

**1–16 տակտերին** ներս են մտնում աղջիկները և պարում տղաների շուրջը:
Պարի ավարտին բոլորը կանգնում են և պարն ավարտում ձեռքերը վերև դրությունում:

# ՆՈՒԲԱՐ - ՆՈՒԲԱՐ

Երաժշտ.՝ *ժողովրդական*

Փոխադրումը դաշն. համար՝ *Է. Բաղդասարյանի*




*Երեխաները կանգնում են շրջան կազմած՝ դեմքով դեպի պարային գիծը:*

1–8–**րդ տակտերին** աջ ոտքով դեպի կենտրոն փոփոխական քայլ են կատարում, ձախ ոտքով՝ դուրս, փոփոխական քայլ: Ձախ ձեռքը՝ 3–րդ դիրքում, աջը՝ 2–րդ դիրքում և հակառակը: 3–րդ դիրքում գտնվող ձեռքի դաստակը կատարում է պտույտ:

9–16–**րդ տակտերին** ոտքերի շարժումը նույնն է, ինչ որ 1–8–րդ տակտերին, ձեռքերը աշխատում են՝ աջը 2–րդ դիրքում, ձախը՝ 1-ին դիրքում, և հակառակը:

17–24–**րդ տակտերին** փոփոխական քայլով գալիս են դեպի կենտրոն՝ աջ ոտքով, երկու ձեռքերը՝ վեր: Ձախ ձեռքերը միացած են կենտրոնում: Աջ ձեռքը իջեցնում են 1-ին դիրք՝ մարմնի թեքումով դպի աջ, նորից աջ ձեռքը բարձրացնում ձախի մոտ:

25–32–**րդ տակտերին՝** փոփոխական քայլ դեպի հետ: Վերադարձ պարային գիծ: Ձեռքերը վերևից իջեցնում են ներքև: 2 պտույտ աջ ուսի վրա, աջ ձեռքը՝ առջևից, ձախը՝ հետևից՝ նախապատրաստական վիճակում:

# ՀՈ՜Յ, ՆԱԶԱՆ

*Հայկական ժողովրդական երգ*




Կար-միր սո - լե - րով ե - կար: Նա - զա՛ն, դու բա - րով ե - կար, Կա - նաչ սա - րե -
րով ե - կար, Կար - միր սո - լե - րով ե - կար:
f
p
mp
Նախ - շուն ես, թի - թեռ - նիկ ես, Ծըլ - վը - լան




Հո՜յ, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Ջա՜ն, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,

Նազա՛ն, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Կարմիր սոլերով եկար:

Նախշուն ես, քիքեռնիկ ես,
Ծըլվլան ծիծեռնիկ ես,

Նազա՛ն, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Կարմիր սոլերով եկար:

Երեխաները, ձեռք ձեռքի տված, շրջան են կազմում և կանգնում դեմքով դեպի շրջանի կենտրոնը (այս դիրքը պահպանվում է մինչև պարի վերջը): Նազանի մենապարը կատարող երեխան կանգնում է շրջանից դուրս՝ մի քանի քայլ հեռավորության վրա:

**1–2–րդ տակտ:** Երեխաները կատարում են երեք քայլ դեպի աջ (սկսած աջ ոտքից), շեշտում երրորդ քայլը և ձախ ոտքը դնում թաթի ծայրի վրա, աջ ոտքի առաջ:

**3–4–րդ տակտ:** Կատարում են նույնը՝ հակառակ ուղղությամբ:

**5–6–րդ տակտ:** Կատարում են երեք քայլ դեպի շրջանի կենտրոն (սկսած աջ ոտքից), շեշտելով երրորդ քայլը՝ ձախ ոտքը դնում են թաթի ծայրի վրա, աջ ոտքի առաջ:

**7–8–րդ տակտ:** Կատարում են երեք քայլ՝ հետ–հետ գնալով՝ սկսած ձախ ոտքից (շրջանը մեծացնում են) և աջ ոտքը դնում ձախ ոտքի կողքին:

**8–9–րդ տակտ:** Կատարում են երկու ծափ կրծքավանդակի դիմաց:

**5–10–րդ տակտերում** նկարագրված շարժումները կրկնվում են ևս մեկ անգամ:

Երեխաները տեղում կանգնած երգում են առաջին քառյակն ու ծափ տալիս (յուրաքանչյուր տակտին՝ մեկ ծափ), իսկ Նազանը պարելով անցնում է շրջանի ներսը և կատարում ցանկացած շարժումներ:

Երաժշտությունը կրկնվում է ևս մեկ անգամ:

Երեխաները երգում են երկրորդ քառյակն ու կատարում պարի առաջին տասը տակտի շարժումները նույն հաջորդականությամբ, իսկ Նազանը շարունակում է իր պարը:

Պարի ժամանակ ոտքերի շարժումներն ունեն որոշ դժվարություն, անհրաժեշտ է ուսուցման ընթացքում օգտագործել շարժումներին համապատասխանող բառեր, նախադասություններ, որոնք թե իրենց ռիթմով և թե բովանդակությամբ կօժանդակեն երեխաներին՝ նյութն արագ յուրացնելու:

Առաջարկում ենք տալ այսպես՝

Աջ գնանք, դնենք թաթը,　　Առաջ գնանք, դնենք թաթը,
Ձախ գնանք, դնենք թաթը,　　Հետ գնանք, դնենք թաթը:

## ՎԵՐ - ՎԵՐԻ

(ՀՈՅ, ՆԱՐԵ)

Երաժշտ.՝ *ժողովրդական*

**Moderato**




Հո՜յ, Նարե՛,
Անձրևն էկավ շաղալեն,
Ջա՜ն, Նարե՛,
Թուփ ու տերև դողալեն:
Հո՜յ, Նարե՛,
Հըրեն էկավ իմ ախպեր,
Ջան, Նարե՛,
Ալ ձին տակեն խաղալեն:

Կայնել ես վարդի հովին,
Քամին տա ծոցիդ մովին,
Երեսիդ շողին մեռնեմ,
Աչքերիդ՝ կապույտ ծովին:

Ջաղացըս՝ պատիկ-պատիկ,
Աչերըդ՝ նըռան հատիկ,
Ամեն քեզի տեսնելուց
Հա՛մ Համբարձում, հա՛մ Զատիկ:

# ՎԵՐ - ՎԵՐԻ

(ՀՈՊ, ԹՌԻ)




Հո՛պ, թռի՛, հո՛պ, հո՛պ, թռի՛,
Հայկո՛ ջան,
Շուտ, թռի՛, շախով թռի՛,
Վարսո՛ ջան:
Խնձոր ես ծառի վրա,
Հայկո՛ ջան,
Ծաղիկ ես սարի վրա,
Վարսո՛ ջան:

Անուշ տաղ ասող բլբուլ,
Հայկո՛ ջան,
Կայնել ես քարի վրա,
Վարսո՛ ջան:
Հո՛պ, թռի՛...

Աղբեր ունեմ՝ ավչի ա,
Հայկո՛ ջան,
Մեջքը բարակ դամշի ա,
Վարսո՛ ջան:
Հո՛պ, թռի՛...

------------------------

*1. ավչի - որսորդ*

*2. դամիշ - եղեգն*

Այս պարատեսակը նույնպես շատ մեծ տարածում և սեր է վայելում, սակայն մասնակիցների թիվն այստեղ սահմանափակ է՝ ամենաշատը 20 հոգի (տե՛ս. Լիսիցյան, "Старинные пляски и театрализованные представления армянского народа", т. 1, стр. 279), զուտ այն պատճառով, որ, ի տարբերություն Գովնդի, սա աշխույժ և թեթև պար է: Արագ մասում կան թռիչքներ, որոնք մեծ թվով մասնակիցների դեպքում դժվար կլինի համաչափ կատարել:

Վեր-վերին պարում են կիսաշրջանով կամ փակ շրջանով, հաճախ էլ սկսում են կիսաշրջանով, որն աստիճանաբար վերածվում է փակ շրջանի: Պարը սովորաբար ունի հանդարտ մաս, որը կատարվում է երգի ուղեկցությամբ, և արագ մաս, որը կատարվում է որևէ նվագարանի կամ նվագարանների ուղեկցությամբ:

Պարողների միջև պետք է լինի մոտավորապես ուսերի լայնությանը հավասար տարածություն: Ձեռքերի բռնվածքն է ափ–ափ, այսինքն՝ ձախ ձեռքի ափը հարևանի աջը բռնած, կամ՝ ձեռքերը հարևանի ուսերին, ձախ ձեռքը՝ ներսի կողմից, ձախ կողմի հարևանի աջ ուսին:

Քայլերը կարող են լինել ինչպես կից, այնպես էլ խաչաձև քայլ-անցումներ, ընդ որում քայլ, անցումը կարելի է կատարել թե՛ առջևից, թե՛ հետևից:

Պարաքայլը հետևյալն է.

«1» հաշվին՝ աջ ոտքով քայլ դեպի աջ:

«2» հաշվին՝ ձախ ոտքով քայլ–միացում աջին (կից քայլ) կամ քայլ անցում:

«3» հաշվին՝ դարձյալ աջ ոտքով քայլ դեպի աջ:

«4» հաշվին՝ ձախ ոտքը խաղում է աջի դիմաց, ծունկը ծալած:

«5» հաշվին՝ ձախ ոտքը գնում է հետ՝ իր նախկին տեղը:

«6» հաշվին՝ աջ ոտքը կատարում է նույն շարժումը, ինչպես ձախը՝ 4 հաշվի ժամանակ, այսինքն՝ խաղում է ձախի դիմաց, ծունկը ծալած:

Արագ մասի ժամանակ այս բոլոր քայլերը կատարվում են թռիչքով:

# ՇԼԴԻԿ - ՄԼԴԻԿ ՄԻ ՆԱՊԱՍՏԱԿ

Խոսք՝ *Լ. Պողոսյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




Չը-գի-տե, թե Որ կողմ գը - նա, Մի ոտ - քը՝ աջ, Իսկ մյու - սը՝ ձախ,
cres.
rit.
Tempo 1
Չը-գի-տե, թե Որ կողմ գը-նա: Ա-հա այս-պես Կանգ-նած է նա,
mf
Քիչ էլ մը-նա՝ Գայ-լը կը-գա, Ա-հա այս-պես Կանգ-նած է նա,
f
Քիչ էլ մը-նա՝ Գայ-լը կը-գա, Քիչ էլ մը-նա՝ Գայ-լը կը-գա:
mf
decresc.
rit.
pp

# ՇԼԴԻԿ - ՄԼԴԻԿ ՄԻ ՆԱՊԱՍՏԱԿ

Մի մեծ անտառ,
Փոքրիկ բացատ,
Շլդիկ-մլդիկ
Մի նապաստակ:
Ականջը՝ սուր,
Ինքը տխուր,
Միտք է անում
Ո՞ւր փախչի, ո՞ւր:

Մի ոտքը՝ աջ,
Իսկ մյուսը՝ ձախ,
Չգիտե, թե
Որ կողմ գնա:
Ահա այսպես
Կանգնած է նա,
Քիչ էլ մնա՝
Գայլը կգա:

*— Ի՞նչ խորհուրդ եք*
*Տալիս դուք ինձ,*
*Փախցնե՞մ նրան*
*Այս բացատից,*
*Թե՞ նկարեմ*
*Վառվող ճրագ,*
*Որ նա մնա*
*Միշտ անվտանգ:*

Խաղերգի նպատակն է երեխաներին ծանոթացնել բնությանը, վայրի կենդանիներին, տալ պատկերացում բնանկարի մասին, միջառարկայական կապ ստեղծել մայրենի լեզվի, թվային և տարածական հասկացությունների, երաժշտության, կերպարվեստի միջև: Բառապաշարը հարստանում է ***մեծ–փոքր, սուր–բութ, ուրախ–տխուր, աջ–ձախ*** հականիշներով: Երեխաները սովորում են օգնել ու պաշտպանել կենդանիներին:

## Բեմականացում

*Խաղից առաջ ընտրում են դերակատարներ՝ Նապաստակ և Գայլ:*

Նախանվագին խումբը քայլելով շրջան է կազմում:

**3–10 տակտերին** երեխաները թեթև ցատկերով պտտվում են շրջանի շուրջը և երգում:

**11–14 տակտերին** Նապաստակը ցատկում է և երգում:

**15–18 տակտերին** խումբը երգում է և կատարում տեքստին համապատասխան շարժումները. ցույց են տալիս մեկ աջ, մեկ ձախ ոտքի թաթերը:

**19–26 տակտերին** Նապաստակը վազվզելով թաքնվում է երեխաների հետևում, իսկ գայլը նրան է փնտրում և որսում: Խաղը կրկնելիս փոխվում են դերակատարները:

Կարելի է բեմանկարներով ստեղծել անտառի տեսարան: Խաղը կարելի է ներկայացնել հանդեսներին:

# ԻՄ ՁԻՆ

Խոսք՝ *Գ. Բորյանի* | Երաժշտ.՝ *Յու. Գևորգյանի*




Ձի, ձի, փայտե ձի,
Մեր դռանը կապեցի,
Սիրում, սիրում ներկեցի,

Հետո նրան թամբեցի,
Ով որ ունի այսպես ձի,
Թող գա ինձ հետ նա մրցի:

# ՊՈԼԿԱ

(«Խաղ դափերով» խաղի համար)

Երաժշտ.՝ *Մ. Կրասևի*




## ԽԱՂ ԴԱՓԵՐՈՎ

Երեխաները կազմում են շրջան: Երեք երեխա դափը ձեռքներին կանգնում են շրջանի կենտրոնում:

Կատարվում է «Պոլկան»:

**1–8–րդ տակտ**: Կենտրոնի երեք երեխաները դափ են խփում, իսկ մյուսները պարում են տեղում, ով ինչպես ցանկանում է՝ համաձայնեցնելով իրենց շարժումները երաժշտության բնույթին:

**9–16–րդ տակտ**: Շրջան կազմողները պպզում են և փակում աչքերը, իսկ դափով երեխաները կամացուկ դուրս են գալիս շրջանից, անցնում պպզած երեխաների թիկունքը, զգուշությամբ դափը դնում երեխաներից երեք հոգու հետևում և վերադառնում շրջանի կենտրոնը:

Վերջին ակորդին պպզած երեխաները բացում են աչքերը և ձեռքերը հետ տանելով շոշափում, թե իրենց մո՞տ է, արդյոք, դափը:

Այն երեխաները, որոնց մոտ գտնվում է դափը, վերցնում են այն և կանգնում շրջանի կենտրոնում, իսկ նախորդ երեքը գրավում են նրանց տեղերը:

Երաժշտության առաջին ութ տակտը կրկնվում է:

**1–8–րդ տակտ**: Դափ ստացող երեխաները պարում, իսկ մյուսները ծափ են տալիս: Խաղը վերսկսվում է:

# Ո՞ՒՄ ՇՐՋԱՆԸ ՇՈՒՏ ԿՀԱՎԱՔՎԻ

*Ռուսական ժողովրդական*




Երեխաները բաժանվում են չորս հավասար փոքրիկ խմբերի: Յուրաքանչյուր խմբի կենտրոնում կանգնում է խաղավար երեխան: Խաղավարներից յուրաքանչյուրի մոտ մեկ՝ մյուսներից գույնով զանազանվող թաշկինակ կա:

**1–8–րդ տակտ**: Երեխաները պտտվում են շրջանաձև, իսկ խաղավարները թափահարում են թաշկինակները կարծես ցույց են տալիս այն:

**9–16–րդ տակտ**: Երեխաները ծափ են տալիս, իսկ խաղավարները ազատ պարում են:

**1–8–րդ տակտ**: Երեխաները տարածվում են դահլիճով մեկ, իսկ խաղավարները թափահարում են թաշկինակները, կարծես հրաժեշտ են տալիս:

**9–16–րդ տակտ**: Բոլորը ազատ պարում են: Ավարտին կքանստում են և փակում աչքերը:

**1–8–րդ տակտ**: Խաղավարները փոխում են իրենց տեղերը և բարձրացնում թաշկինակները:

**9–16–րդ տակտ**: Երեխաները վազում են իրենց խաղավարի մոտ և նրա շուրջը շրջան կազմում: Հաղթում է այն խումբը, որը շուտ է հավաքվում:

# ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՔԱՅԻ ՔԱՐԱՅՐՈՒՄ

(«ԱՐՋՆ ՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԸ» ԽԱՂԻ ՀԱՄԱՐ)

Երաժշտ.՝ *Է. Գրիգի*



## ԱՐՋՆ ՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Դաստիարակը երեխաներից ընտրում է «արջին» և նրան ուղարկում սենյակի որևէ մի անկյուն՝ «որջը»:

Երեխաները որևէ պարային երաժշտության ներքո («Պոլկա», «Ուրախ պար», և այլն) կատարում են տարբեր շարժումներ՝ միայնակ, զույգերով, խմբերով, պահպանելով երաժշտության ռիթմը:

Հանկարծ լսվում է մի հատված «Լեռնային արքայի քարայրում» երաժշտությունից, և հայտնվում է «արջը»: Նա թեթև օրորվում է և ծանր քայլում (մեկ տակտին՝ երկու քայլ): Երեխաները մնում են անշարժ՝ պահպանելով արդեն ընդունած դիրքը:

«Արջը» հոտոտելով անցնում է երեխաների արանքով և իր «որջը» տանում այն երեխային, որը չի կարողանում տեղում անշարժ մնալ:

Դաստիարակը մնացած երեխաներից ընտրում է նոր «արջ», և խաղը վերսկսվում է:

Խաղը կրկնվում է 2–3 անգամ:

## ԳՆԴԱԿՈՎ ԽԱՂ

Խոսք՝ *Լ. Պողոսյանի* Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*

Կլոր ու սիրուն
Կարմիր գնդակով
Խաղում եմ, խաղում
Ու չեմ ձանձրանում:

Այսպես գլորվեց
Գնդակս փքված,
Որ մեր փիսոն էլ
Մնաց զարմացած:

Դու շատ ես հոգնել,
Ինձանի՞ց ես փախել,
Խնդրում եմ՝ դարձիր,
Էլ չեմ հոգնեցնի:

Թը՛փ-թը՛փ, թը՛փ-թը՛փ-թը՛փ,
Թը՛փ, թը՛փ, թը՛փ, թը՛փ,
Թը՛փ-թը՛փ, թը՛փ-թը՛փ-թը՛փ,
Ու չեմ ձանձրանում:

Թը՛փ-թը՛փ, թը՛փ-թը՛փ-թը՛փ,
Թը՛փ, թը՛փ, թը՛փ, թը՛փ,
Թը՛փ-թը՛փ, թը՛փ-թը՛փ-թը՛փ,
Ու չեմ ձանձրանում:

Թը՛փ-թը՛փ, թը՛փ-թը՛փ-թը՛փ,
Թը՛փ, թը՛փ, թը՛փ, թը՛փ,
Թը՛փ-թը՛փ, թը՛փ-թը՛փ-թը՛փ,
Ու չեմ ձանձրանում:

### Բեմականացում

*Երեխաները կանգնում են շրջանաձև:*
*Կենտրոնում երեխաներից մեկն է՝ գնդակը ձեռքին:*

*1–ին քառյակ*

4–12 տակտերին երեխաները երգելով քայլում են շրջանագծով:

13–20 տակտերին խումբը կանգնում է, ծափ տալիս և երգում, կենտրոնի երեխան՝ նույնպես:

*2–րդ քառյակ*

4–12 տակտերին կենտրոնում կանգնած երեխան երգում է և գնդակը հերթականությամբ գլորում երեխաներին ու հետ ստանում նրանցից:

13–20 տակտերին խումբը երգում է և ծափ տալիս, իսկ կենտրոնի երեխան գնդակը զցում է հատակին ու բռնում՝ երաժշտության ռիթմին համապատասխան:

*3–րդ քառյակ*

4–12 տակտերին երեխաները երգում են և աշխույժ իրար փոխանցելով թաքցնում են գնդակը: Իսկ կենտրոնի երեխան փնտրում է այն ու գտնում:

# ԳՆԴԱԿՈՎ ԽԱՂ

Խոսք՝ *Լ. Պողոսյանի* Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*



ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

# ԽԻԶԱԽ ՀԵԾՅԱԼԸ

Երաժշտ.՝ *Ռ. Շումանի*

**Lebhaft**



# ԴԻՆԳ - ԴՈՆԳ

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *Ռ. Ամիրխանյանի*






Դինգ-դոնգ, ժմռան երկնքում,
Դինգ-դոնգ, աստղերն են զնգում,
Դինգ-դոնգ-դինգ, երկինքը աստղալից
Լուռ ժպտում է մեզ հեռվից:

Դինգ-դոնգ, զիլ զնգա մեր զանգ,
Դինգ-դոնգ, տուր մեզ երազանք,
Դինգ-դոնգ-դինգ, ինչ լավն է եղևնին՝
Ձիլ զանգերն իր քնքրին:

Ծիլինգ, ծիլինգ,ծիլինգ ...

## ԱՐՋԻ ՎԻՇՏԸ

Խոսք՝ ***ժողովրդական*** Երաժշտ.՝ ***Ռ. Մելիքյանի***




Մի օր արջը լնգին, լնգին,
Կոպալ դունչը ծնկին, ծնկին,
Ճամփեն՝ ոլոր, սիրտը՝ մոլոր,
Արտասվում էր հոնգուր, հոնգուր:

— Դու ո՞ւր կորար, ա՛յ իմ քոթոթ,—
Արտասվում էր արջը բրդոտ,—
Քեզ փնտրեցի երկիր բոլոր,
Բայց չգտա ոլոր-մոլոր:

# ԼԱՐԱԽԱՂԱՑ

«ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ» շարքից

*Լարախաղացն ելավ լարին,*
*Ելավ կանգնեց ոտքի ծայրին,*
*Ողջ դահլիճը ուրախ գոռաց.*
*— Կեցցե՛ս, անվախ լարախաղաց:*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*






# ԾԱՂՐԱԾՈՒՆԵՐ

**Allegro**

Երաժշտ.՝ *Դ. Կաբալևսկու*



# ԾԱՂՐԱԾՈՒ
## ПЕТРУШКА

Երաժշտ.՝ *Ի. Բրամսի*
Музыка *И. Брамса*

Աշխույժ
**Оживленно**




Дили, дили, динь.
Пришел Петрушка.
Дили, дили, динь,
Как весел он.

Дили, дили, динь,
Гремит погремушкой,
Дили, дили, динь,
Бубенчиков трезвон.

# ՏԻԿՆԻԿԻ ՕՐՈՐԸ

Երաժշտ.՝ *Մ. Միրզայանի*

**Andante tranquillo**



# ՊԱՊԻԿԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Երաժշտ.՝ *Ղ. Սարյանի*



# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԿՂԻԿ

«ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ» շարքից

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*

**Allegro moderato**



# ԻՄ ՁԻՆ

Խոսք՝ *Գ. Բորյանի*

Երաժշտ.՝ *Ռ. Պետրոսյանի*



ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

# ՏՈՆԱԾԱՌ

Խոսք՝ *Մ. Միրզայանի* Երաժշտ.՝ *Մ. Միրզայանի*

**Moderato**




Տոնածա՛ռ ջան, տոնածա՛ռ,
Ի՞նչ սիրուն ես ու պայծառ,
Էս ի՞նչ լավն է, էս ի՞նչ լավն է,
Չորս կողմը լույս ու փայլ է:

# ԻՄ ՍԱՀՆԱԿԸ

Խոսք՝ *Ս. Կապուտիկյանի* Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*






Ինչքան լավ է, ինչ սիրուն՝
Իմ սահնակը զարդարուն:
Գիտե՞ք, ես եմ պատրաստել:
— Ես եմ տաշել կողերը,
Ես եմ ներկել ճաղերը,
Տակը քաշել եմ թիթեղ,
Որ լավ սահի ամեն տեղ:
Շտապում եմ անհամբեր,
Դե շո՛ւտ արի, ա՛յ, ձմեռ,
Որ ստուգեմ ձյուներում՝
Սահնակս ինչպես է սղղում...

# ԴԱՀՈՒԿՆԵՐԸ ԻՄ ՍԻՐՈՒՆ

Խոսք՝ *Մ. Կորյունի* Երաժշտ.՝ *Ս. Գալիկյանի*




Օրը վառ է, շողշողում,
Փաթիլները պսպղում:
Հե՜յ, ինչ լավն են ու սահում
Դահուկները իմ սիրում:

# ԾԱՂՐԱԾՈՒ

*Միշտ ուրախ ժպտացող,*
*Խոսքը՝ դիպուկ, ծիծաղը՝ ծով,*

*Ծաղրածու է նա՝ թիզ ու կես,*
*Ծով ծիծաղ է տալիս նա մեզ:*

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*










Զույգ աչքերս՝ զույգ սալոր,
Զույգ այտերս պոմիդոր,
Ծաղրածու եմ՝ թիզ ու կես,
Ծով ծիծաղ եմ տալիս ձեզ:

Ես կուզեմ, որ երկարի
Ձեր ժպիտը միշտ բարի:
Աստղերի պես թող վառվի
Ու ոչ մի օր չմարի:

# ՆՈՐ ՏԱՐԻ

Խոսք՝ *Կ. Գևորգյանի* Երաժշտ.՝ *Ռ. Պետրոսյանի*




mf
քիաք: Եկ, դու ի - ջիր պա-րով, Աստ-ղե-րի ջինջ խա-ղով
Տո-նա-ծա-ռին վառ ու խըն-դում, Տո-նա-ծա-ռին զար-դա-րում, Որ ե-րազն է
մեր կա-նաչ, Ջա՜ն, մեր կա - նաչ: Լա-լա-լա-լա...
1.
Որ ե-րազն է մեր կա-նաչ, Ջա՜ն, մեր կա -




Դու գալիք ու բարիք,
Միշտ լուսեղեն ու զվարթ,
Նոր տարի մեր բարի,
Ձյունեղեն հեքիաթ:

*Կրկներգ* - Եկ, դու իջի՛ր պարով
Աստղերի ջինջ խաղով
Տոնածառին վառ ու խնդուն,
Տոնածառին զարդարուն,
Որ երազն է մեր կանաչ,
Ջա՜ն, մեր կանաչ:
Լա-լա-լա-լա, լա-լա-լա-լա,
Լա-լա-լա-լա, լա-լա-լա-լա,
Որ երազն է մեր կանաչ,
Ջա՜ն, մեր կանաչ:

Ու քեզ հետ այս փոքրիկ
Մոլորակում հարազատ
Մենք կապրենք երջանիկ,
Միշտ խաղաղ ազատ:

*Կրկներգ*- Եկ, դու իջի՛ր պարով...

# ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԾԱՂԻԿ

«ԱՐԵՎԱԶՕԾ ԾԱՂԿԱՆՈՑ» շարքից

Խոսք՝ *Ս. Մուրադյանի* — Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




Ի՞նչ ծա-ղիկ է այս հըս-կան, Այս-քան շը-քեղ, զար-դա-րուն:
mp
Ե-ղև-նի է մի կա-նաչ՝ Լույ-սե-րի մեջ վառ-վը-ռուն:
Ե-ղև-նի է մի կա-նաչ Լույ-սե-րի մեջ վառ-վը-ռուն:
Նը-րա կա-նաչ ճյու-ղե-րին՝ Պայ-ծառ ա-րև ու լու-սին,
mf (p)




— Ի՞նչ ծաղիկ է այս հսկան,
Այսքան շքեղ, զարդարուն:
— Եղևնի է մի կանաչ՝
Լույսերի մեջ վառվռուն:

Այս ծաղիկը դալարուն,
Այսքան շքեղ, զարդարուն,
Մեզ բերում է երգ ու խինդ,
Ուրախություն ու ժպիտ:

Ու ծաղիկն այս լուսավառ
Գույներ ունի անհամար,
Ու մաղթում է ծով բարիք,
Պայծառ երազ, վառ գալիք:

*Կրկներգ* - Նրա կանաչ ճյուղերին՝
Պայծառ արև ու լուսին,
Աստղեր անմար շողշողում,
Լույս են տալիս մեր հոգում:

*Կրկներգ*- Նրա կանաչ…

*Կրկներգ* - Նրա կանաչ…

****) Երրորդ քառյակից առաջ նախանվագի ութ տակտը ուղեկցել «լա» - «լա» վանկով:***

# ԵՐԿՈՒ ԽՆՁՈՐ ԹՈՒՇ ՈՒՆԵՍ

Հայկական ժողովրդական երգ

Խոսք՝ *Հովհ. Շիրազի* — Մշակումը՝ *Ա. Մանուկյանի*




Երկու խնձոր թուշ ունես,
Աչքերի տեղ նուշ ունես,
Ինչքան պաչե քեզ մաման,
Չի պակասի ոչ մի բան
Թշիդ կարմիր խնձորից
Ու աչքերիդ վառ նուշից:

Դու անուշ ես նոր կյանքում,
Դու արտի մեջ լոր կյանքում.
Ինչքան պաչի պապան քեզ,
Չի պակասի ջրի պես
Քո նուշ-անուշ աչքերից,
Կարմիր խնձոր այտերից:

# ՉԱԼՏԻԿ ԳԱՌԸ

Խոսք՝ *Ն. Միքայելյանի* | Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*




Պապը ուներ մի ժիր գառ,
Դունչը՝ կարմիր, վիզը՝ չալ,
Դունչը՝ կարմիր, վիզը՝ չալ:
Ի՜նչ գառնուկ էր բուրդը՝ խաս,
Ուսը՝ փափուկ, աչքը՝ պարզ,
Ուսը՝ փափուկ, աչքը՝ պարզ:

Չալտիկ գառը երբ դուրս գար,
Զանգը վզին կզնգար,
Զանգը վզին կզնգար:
Ու երբ զանգը կզնգար,
Պապը կասեր՝ ջա՜ն, ի՛մ գառ,
Պապը կասեր՝ ջա՜ն, ի՛մ գառ:

# ՀԱՄՈՆ

*Հայկական ժողովրդական երգ*






Անձրև եկավ, ձյուն եկավ,
Փոքրիկ Համոն տուն եկավ,
Շորը՝ թաց, ինքը՝ ջուր,
Կծիկ դարձած մի պուճուր:

Ճապիկ-վարտիք հանեցինք,
Թոնրի շրթին քամեցինք,
Դու ինչո՞ւ ուշացար,
Ջրից հանած մուկ դարձար:

# ԽՆՈՑԻ

Խոսք՝ Հ. *Թումանյանի*

Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*






Հարի՛, հարի՛, խնոցի՛,
Նա՛յ-նար, նա՛յ-նար,
Հո՛յ, նա՛ր-նա՛ր:

Մեջդ՝ բարի, խնոցի՛,
Նա՛յ-նար, նա՛յ-նար,
Հո՛յ, նա՛ր-նա՛ր:

Ունկդ՝ բարակ, խնոցի՛,
Նա՛յ-նար, նա՛յ-նար,
Հո՛յ, նա՛ր-նա՛ր:

Մեջդ՝ կարազ, խնոցի՛,
Նա՛յ-նար, նա՛յ-նար,
Հո՛յ, նա՛ր-նա՛ր:

# ՆԱՆԻԿ ԱՍԵՄ

Խոսք՝ *Ս. Կապուտիկյանի* Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*






Նանիկ ասեմ իմ տիկնիկին,
Իմ արջուկին, շնիկին:

Նանա՛, նանա՛, մուշ-մուշ արեք,
Չխանգարե՛ք մայրիկին:

# ԿԱՏԱԿ-ԵՐԳ

Խոսքի մշակումը՝ *Է.Ավագյանի*

Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*






Ելա մթին երկուշաբթի,
Պարկը բացի երեքշաբթի,
երեքշաբթի:
Ջուր կրեցի չորեքշաբթի,
Խմոր արի ես հինգշաբթի,
ես հինգշաբթի:

Հաց թխեցի ուրբաթ օրը,
Տուն բերեցի շաբաթ օրը,
շաբաթ օրը:

Բա կիրակի էլ ի՞նչ անեմ,
Ո՞վ է բանում, որ ես բանեմ,
որ ես բանեմ:

# ՍԵՅՐԱՆԻ

Խոսք՝ *Ս. Կապուտիկյանի*

Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*






Եկե՛ք պարենք թռվռալով,
Եկե՛ք պարենք՝ ծափիկ տալով:

Ծա՛փ-ծա՛փ, ծա՛փ-ծա՛փ, ծափիկ անենք,
Նստածներին տեղից հանենք:

Եկե՛ք պարենք թռվռալով,
Եկե՛ք պարենք ծափիկ տալով:

Ծա՛փ-ծա՛փ, ծա՛փ-ծա՛փ, ծափիկ անենք,
Նստածներին տեղից հանենք:

# ԱՂՋԻԿՆԵՐ, ՊԱՐ ԲՌՆԵՑԵՔ

Խոսք՝ *Ղազարոս Աղայանի*

Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*






Աղջիկնե՛ր, պա՛ր բռնեցեք,
Արմիկի աչեր գովեցե՛ք:

Ա՜յ աչեր, սիրո՛ւն աչեր,
Արևի պես փայլո՛ւն աչեր:

Աղջիկնե՛ր, պա՛ր բռնեցեք,
Արմիկի երես գովեցե՛ք:

Ա՜յ երե՛ս, չարմա՛ղ երես,
Դու չքողնես մեզ սևերես:

# ԵՂՆԻԿ

*Հայկական ժողովրդական երգ*

**Allegro moderato**

*Կոմիտաս*




— Եղնիկ, դու ո՞ր սարն ես արծել:
— Ասիս, Մասիս սարն եմ արծել:

— Եղնիկ, դու ո՞ր ջուրն ես խմել:
— Սառնաղբյուրի ջուրն եմ խմել:

# ՄԱՌԱՆ ՄՏԱ

*Հայկական ժողովրդական*

**Allegro**




Մառան մտա, ման եկա,
Վա՜յ, լե՛ լե՛, ջա՜ն լե՛, լե՛,
Մեծ կճուճը բերեցի,
Վա՜յ, լո՜, լո՜, ջա՜ն, լո՜, լո՜:

Բերանը շուտ բացեցի ,
Վա՜յ, լե՛ լե, ջա՜ն լե՛, լե՛,
Տեսա մեջը յուղ չկա,
Վա՜յ, լո՜, լո՜, ջա՜ն, լո՜, լո՜:

# ՔԵՌԻՆ ԵԿԱՎ ՄԵՐ ԲԱԿԸ

*Հայկական ժողովրդական երգ*

**Moderato**




Քեռին եկավ մեր բակը,
Դու-լու-լու, դու-լու-լու, մեր բակը,
Մի մեծ կճուճ շալակը,
Դու-լու-լու, դու-լու-լու, շալակը:

Ուսի թելը կտրվեց,
Դու-լու-լու, դու-լու-լու, կտրվեց,
Կճուճն ընկավ կոտրվեց,
Դու-լու-լու, դու-լու-լու, կոտրվեց: